

Իրացվելիության վերահսկողության ակտիվիզմական մոտեցում

Միրզոյան Անի Մ.

տ. գ. թ., Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դասախոս,

ՀՊՏՀ (Երևան, ՀՀ)

ani.mirzoyan91@gmail.com

ՀՏԳ՝ 657; **EDN:** MZHQQK; **JEL:** G33;

DOI: 10.58587/18292437-2024.2-122

Հանգուցաբառեր՝ Դինամիկ իրացվելիություն, բիզնես գործընթացներ, իրացվելիության դինամիկ մոդել, դինամիկ իրացվելիության օպտիմալ մակարդակ

Алгоритмический подход к контролю ликвидности

Мирзоян Ани М.

к.э.н., преподаватель факультета Бухгалтерский учет и аудит,

АГЭУ (Ереван, РА)

Аннотация. На фоне нынешних вызовов мировой экономики, когда торговые войны стали одним из важных инструментов, используемых в условиях резкого противостояния различных систем ценностей, такой маленькой стране, как Армения, сильно зависящая от одного экономического полюса, безусловно, необходимо придать импульс процессу серьезного шага по диверсификации своей экономики, поэтому стало чрезвычайно важным совершенствование методов контроля ликвидности хозяйствующих субъектов, в данной статье мы предложим алгоритм соответствующих последовательных шагов, направленных на поддержание оптимального уровня ликвидности. Целью такого алгоритма будет построение эффективного механизма, с помощью которого у организации не будет возможности иметь ни избытка, ни недостатка ликвидных средств, поскольку избыток ликвидных средств тоже говорит о плохом менеджменте.

Ключевые слова: динамическая ликвидность, бизнес-процессы, модель динамической ликвидности, оптимальный уровень динамической ликвидности

Algorithmic approach to liquidity control

Mirzoyan Ani M.

Candidate of Economic Science, Lecturer in Department of Management Account and audit,

ASUE (Yerevan, RA)

Summary: Against the background of the current challenges of the world economy, when trade wars have become one of the important tools used in the face of a sharp confrontation of different value systems, a small economy like Armenia, which is highly dependent on one economic pole, definitely needs to give momentum to the process of taking a serious step towards the diversification of its economy, the improvement of liquidity control methods for business entities has become extremely important, so in this article we will propose an algorithm of appropriate sequential steps aimed at maintaining the optimal level of liquidity. The purpose of such an algorithm will be to build an efficient mechanism by which the organization will have the opportunity to have neither an excess nor a shortage of liquid funds, because an excess of liquid funds also determined as bad management.

Keywords: Dynamic Liquidity, Business Processes, Dynamic Liquidity Model, Optimal Level of Dynamic Liquidity

Կազմակերպության իրացվելիության վերահսկողությունը բիզնես գործընթացների կազմակերպման մեթոդների ամբողջություն է, որի կիրառումը էական հնարավորություններ է ստեղծում ժամանակին և ամբողջությամբ կատարելու բոլոր պարտավորությունները ինչպես տվյալ ժամանակահատվածում, այնպես էլ ապագայում:

Բիզնես գործընթացների տակ նկատի է առնվում փոխկապակցված հաջորդական գործառնություններ և գործողություններ, որոնք իրականացվում են կազմակերպությունում նրա գործունեության ամբողջ կենսափուլի ընթացքում:

Կարելի է ասել, որ ներկայումս իրացվելիության վերահսկողությունը ըստ էության հիմնվում է երկու մոտեցումների վրա:

Առաջին մոտեցումը հիմնվում է պահուստների նկատմամբ խիստ վերահսկողության իրականացման վրա: Այն ենթադրում է կազմակերպության կողմից տնօրինվող բոլոր ակտիվներից ազատվող միջոցներից եկամուտների ստացմանը, այսինքն ցանկացած ազատված միջոց պետք է ներդրվի և ապահովի կազմակերպությանը որոշակի եկամուտ: Այս մոտեցման հիմնական թերությունն այն է, որ կազմակերպության մոտ շատ հաճախ կարճաժամկետ չիրացվելիության ռիսկ է առաջանում, ինչը

կարող է վտանգ հանդիսանալ կազմակերպության կայուն վճարունակության համար: Իր հերթին կազմակերպության կարճաժամկետ չիրացվելիությունը կարող է հանգեցնել վստահության և իմիջի կորստի, և որպես հետևանք, հեռանկարում նաև երկարաժամկետ չիրացվելիության: Այս մոտեցման երկրորդ թերությունն այն է, որ բոլոր ժամանակավորապես ազատ միջոցների ակտիվ ներդրումները հանգեցնում են խոշոր և երկարաժամկետ ծրագրերի նկատմամբ փոքր պահանջարկին և կարճաժամկետ ծրագրերի նախընտրելիությանը, ինչի արդյունքում էլ կարող է կազմակերպությունը երկարաժամկետ իրացվելիության առումով խնդիր ունենալ: Այդ երևույթի վերաբերյալ իր մեկնաբանությունն են տվել Ս. Մայերսը և Ռ. Ռայնան [7]:

Երկրորդ մոտեցումը ամբողջությամբ հակադարձում է առաջին մոտեցմանը: Երկրորդ մոտեցմամբ քաղաքականությունը հանգում է մշտապես ռեսուրսները այնպիսի մակարդակի վրա պահելուն, որ կազմակերպությունը միշտ բավարար միջոցներ ունենա իր տնտեսական կարիքները հոգալու համար՝ հաշվի առնելով անկանխատեսելի իրավիճակները: Բայց տվյալ դեպքում էլ իրացվելիության մակարդակի խստիվ պահպանումը բացթողնված հնարավորությունների պատճառ է դառնում, մի իրավիճակ, երբ կազմակերպությունը կարող էր լրացուցիչ եկամուտ ստանալ առկա իրացվելի ռեսուրսները շարժի մեջ դնելու շնորհիվ, սակայն դրանք պահվել են անբավարար իրացվելիություն առաջացնող իրավիճակների դիպքում համապատասխան ռիսկը զսպելու համար:

Բացի դրանից, որքան բարձր է կազմակերպության իրացվելիությունը, այնքան ավելի մեծաթիվ են կազմակերպության նկատմամբ վերահսկողություն ստանալ ցանկացողները, և միաժամանակ, կազմակերպությունը ավելի թույլ կարող է դիմակայել նման փորձերին:

Սույն հոդվածում մեր կողմից առաջարկվում է երրորդ՝ համալիր մոտեցումը, որն ըստ էության վերը քննարկված երկու մոտեցումների սինթեզ է: Համալիր մոտեցման էությունը կայանում է նրանում, որ ապագա իրավիճակները ծրագրավորվում են այնպես, որպեսզի ժամանակի ցանկացած պահի դրությամբ կազմակերպությունը չուներ ռեսուրսների ո՛չ ավելցուկ, ո՛չ պակաս: Սա գործնականում հնարավոր է իրացնել՝ կանխատեսելով վերլուծվող կազմակերպության արտաքին և ներքին միջավայրերում փոփոխությունները բոլոր բիզնես գործընթացների գծով: Պրակտիկայում այս առաջարկվող մոտեցումը արդյունավետորեն կիրառելու համար պահանջվում է, որպեսզի կազմակերպությունը նախևառաջ հետևի մի շարք պայմանների՝ կազմակերպության անձնակազմի վերին և միջին օղակների բարձր

մասնագիտական մակարդակի ապահովում և ներքին խիստ կարգապահության ապահովում:

Հարկ ենք համարում շեշտել, որ առաջարկվող համալիր մոտեցումը գերծ է այն թերություններից, որոնք առկա են վերը նշված երկու մոտեցումներում, քանի որ այն չի ենթադրում ոչ միայն անհապաղ բոլոր ակտիվներում ներդրումներ կատարել, այլ նաև չի պարտադրում ռեսուրսները միշտ այնպիսի մակարդակում պահել, որը թույլ կտա անընդհատ մեծ թվով իրացվելի ակտիվներ ունենալ բալանսում հնարավոր անկանխատեսելի իրավիճակները կառավարելու համար:


Առաջին կամ երկրորդ մոտեցումների օգտագործումը իրացվելիության վերահսկողության նպատակով պայմանավորված է դրանց հետ մեկտեղ կիրառվող վերլուծության համակարգերով: Առաջին մոտեցումը ներառում է հաշվապահական հաշվեկշռի հոդվածների հիման վրա կազմակերպության իրացվելիության վերլուծության իրականացումը: Վերլուծության այս մեթոդի էությունը հաշվեկշռի առանձին հոդվածների միջև հաշվեկշռվածություն գտնելն է, ինչպես նաև իրացվելիության ու վճարունակության տարբեր ցուցանիշների և դրանց չափանիշների վերլուծության արդյունքներով իրացվելիության վերահսկողությունը: Փաստորեն այս դեպքում գործ ենք ունենում ստատիկ իրացվելիության վիճակի հետ, իսկ սովորական օրինաչափությունը հանգում է եռամսյակային կտրվածքով վերլուծությանը: Այս մեթոդի վերլուծության առավելություններից են նվազագույն աշխատածախսերը, միջին տնտեսագիտական որակավորում ունեցող ղեկավար անձանց համար վերլուծության արդյունքների հասկանալի բնույթը և դրանց ստացման մատչելիությունը:

Թերություններից են օպերատիվ ամբողջական վերահսկողության բացակայությունը, ինչպես նաև եռամսյակների ընթացքում իրացվելիության տատանումների գծով որոշումներ կայացնելու համար տեղեկատվության բացակայությունը: Նշենք, որ վերլուծության արդյունքները ստատիկ են և հնարավորություն չեն տալիս կանխատեսելու իրացվելիության վիճակը ապագայում: Վերլուծության այս մեթոդը նպատակահարմար է կիրառել արտաքին օգտագործողների կողմից իրացվելիության և վճարունակության վերլուծության, ինչպես նաև ակտիվների դանդաղ շրջանառելիություն ունեցող կազմակերպություններում իրացվելիությունը վերահսկելու համար:

Կազմակերպության իրացվելիության վերլուծության երկրորդ համակարգը օգտագործվում է կազմակերպությունում բյուջետավորման զարգացած համակարգի առկայության պայմաններում դրա կանոնավոր կառավարմամբ:

Տվյալ դեպքում իրացվելիությունը հնարավոր է վերահսկել բյուջետավորման արդյունքների հիման վրա: Սրա էությունը կայանում է նրանում, որ համապատասխան կանխատեսվող բյուջեների՝ դրամական միջոցների շարժի, եկամուտների և ծախսերի, իրացվելիության պլանավորված մակարդակի ճշգրտման գծով ընդունվում են որոշումներ: Այս համակարգի

առավելություններից են օպերատիվությունը, կարճաժամկետ հեռանկարում արդյունքների ճշգրտությունը և որակավորված մասնագետների համար ստացված արդյունքների բավարար թափանցիկությունը: Այս համակարգը ավելի նպատակահարմար է կիրառել կապիտալի միջին շրջապտույտ ունեցող արտադրական և առևտրային կազմակերպություններում:



Գծապատկեր 1. Տնտեսվարող սուբյեկտի իրացվելիության դինամիկ վերլուծության իրականացման հաջորդական քայլերի ալգորիթմ:

Մեր կողմից առաջարկված մոտեցման կիրառման դեպքում հնարավորություն է ընձեռնվում իրացվելիության ստատիկ վիճակի վերլուծությունից անցնել դինամիկ վիճակի

վերլուծության, որն իր հերթին հիմնվում է բիզնես գործընթացների վերլուծության վրա: Դրա շրջանակներում հնարավոր է լինում կատարել իրացվելիության վիճակի կանխատեսում

ցանկացած փուլում և ժամանակի ցանկացած պահին: Ինչպես նաև թույլ է տալիս բացահայտել այն խորքային պատճառները, որոնք էապես ազդում են իրացվելիության վիճակի փոփոխության վրա և գնահատել դրանց ազդեցության աստիճանը: Գործնական կիրառման դժվարություններից են դիմամիկ իրացվելիության վերլուծության բարդությունը և աշխատատարությունը: Բայց փաստենք, որ առաջարկված մոտեցմամբ ստացվող վերլուծության արդյունքները վերագրվում են ներֆիրմային տեղեկատվությանը՝ դառնալով քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ կառավարչական արդյունավետ որոշումների կայացման նախապայման:

Կազմակերպություններում իրացվելիության դիմամիկ վերահսկողություն իրականացնելու համար մեր կողմից կազմվել է տնտեսվարող սուբյեկտի իրացվելիության դիմամիկ վերլուծության իրականացման հաջորդական քայլերի ալգորիթմ: *Հեղինակի կողմից առաջարկված հաջորդական քայլերի ալգորիթմը* ունի հետևյալ տեսքը.

Եվ այսպես, առաջին քայլով անհրաժեշտ է իրականացնել կազմակերպության բիզնես գործընթացների վերլուծություն, որպեսզի բացահայտվի դրանց ազդեցությունը դիմամիկ իրացվելիության վրա: Բիզնես գործընթացների վերլուծությունն անհրաժեշտ է իրականացնել երկու փուլով՝

1. հավաքագրվում է կազմակերպությունում գոյություն ունեցող բիզնես գործընթացների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը,

2. հավաքագրված տեղեկատվությունը վերամշակվում է:

Կազմակերպության բիզնես գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն իրականացվում է հարցաթերթիկների միջոցով, որոնցում հարցվող աշխատակիցների կողմից արձանագրվում է պահանջվող տեղեկատվությունը: Հարցաթերթիկները լրամշակվում են և դրանցում պարունակվող տեղեկատվության հիման վրա ստեղծվում են բիզնես գործընթացների սխեմաներ:

Ալգորիթմի երկրորդ փուլում կառուցվում է դիմամիկ իրացվելիության մոդել: Այն հատկապես օգտակար կլինի կազմակերպության վերաբերյալ որոշումներ կայացնող ղեկավար անձնակազմի համար: Նման անձինք են գլխավոր տնօրենը, տնօրենների կառավարման մարմնի և խորհրդի անդամները: Նրանք,

օգտվելով դիմամիկ իրացվելիության մոդելից, կարող են գնահատել տեղի ունեցող փոփոխությունները:

Երրորդ փուլում ֆինանսական վերլուծաբանների կողմից տիպային բանաձևի հիման վրա դուրս է բերվում դիմամիկ իրացվելիության մակարդակի որոշման անհատական բանաձև: Այս փուլում որոշվում են բիզնես գործընթացների ազդեցության հանգույցային կետերը:

Չորրորդ փուլում որոշվում է դիմամիկ իրացվելիության օպտիմալ մակարդակը ժամանակի կոնկրետ պահի դրությամբ ելնելով հետևյալ հիմնական գործոններից.

- կազմակերպության ռազմավարությունից և նպատակներից,

- կազմակերպության գործունեության ճյուղային առանձնահատկություններից, մասնավորապես կազմակերպության շահութաբերությունից, սեփական և փոխառու կապիտալների հարաբերակցությունից, ակտիվների կառուցվածքից, հումք մատակարարողների հետ ձևավորված գործընկերային հարաբերություններից,

- արտաքին միջավայրի վիճակից, մասնավորապես՝ մրցակցային միջավայրից, կապիտալի, ապրանքային կամ սպառողական շուկաների վիճակից:

Հինգերորդ փուլում ապահովվում է կազմակերպության համար դիմամիկ իրացվելիության ընտրված մակարդակը, որպեսզի հետագայում տեսնենք, թե ինչպես են իրացվելիության ներքին և արտաքին գործոնների փոփոխություններն անմիջականորեն ազդում օպտիմալ մակարդակի վրա:

Գործնականում դիմամիկ իրացվելիության օպտիմալ մակարդակի ապահովումն իրականացվում է որոշումների պլանավորման, դրանց կատարման արդյունքների նախնական վերլուծության, որոշումների ընդունման ու կատարման և դիմամիկ իրացվելիության օպտիմալ մակարդակի նկատմամբ վերահսկողության միջոցով:

Այս գործընթացում, ինչպես կայուն այնպես էլ ճգնաժամում գտնվող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների վերլուծության ընթացքում էական նշանակություն ունեն հաշվեկշռի հիմնական դրական և բացասական հատկանիշները: Դրանց վերաբերյալ պատրաստել ենք հետևյալ աղյուսակը՝

Աղյուսակ 1. Կազմակերպության հաշվեկշռի որակի բնութագրական հատկանիշները

Որակի հատկանիշներ	
Բացասական հաշվեկշիռ	Դրական հաշվեկշիռ
Դժվար իրացվելի ակտիվների ան	Հաշվեկշռի հանրագումարի հիմնավորված ան
Ակտիվների շրջանառելիության	Չուտ ակտիվների և կապիտալի ան

Որակի հատկանիշներ	
Բացասական հաշվեկշիռ	Դրական հաշվեկշիռ
դանդաղում	
Ժամկետանց պարտավորությունների մասնաբաժնի ավելացում	Ժամկետանց դեբիտորական և կրեդիտորական պարտքերի ցածր տեսակարար կշիռ
Վնաս ունենալ	Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի աճի տեմպերի հստակ հաշվեկշիռվածություն
Միջոցների ներգրավման ու տեղաբաշխման ոչ ռացիոնալ կառուցվածքի առկայություն	Մեփական կապիտալի աճի տեմպի գերազանցում փոխառու կապիտալի աճի տեմպին
Իրացվելիության գործակիցների նվազում	Շահույթ ունենալը
Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի աճի տեմպերի զգալի անհաշվեկշիռվածություն	Ակտիվների շրջանառելիության ցուցանիշների աճ
Փոխառու կապիտալի աճի տեմպի գերազանցում սեփական կապիտալի աճի տեմպի նկատմամբ	Ֆինանսական լծակի արդյունավետության ցուցանիշի դրական միտում
Զուտ ակտիվներ ցուցանիշի անկում	Իրացվելիության ցուցանիշների նկատելի բարելավում

Աղյուսակը կազմվել է հեղինակի հետազոտության հիման վրա:

Կազմակերպության դինամիկ իրացվելիության օպտիմալ մակարդակի ապահովումը հնարավոր է զուգահեռ կառավարչական որոշումներ ընդունելու ուղով: Տվյալ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր հավանական այն գործոնները, որոնք որոշում են դինամիկ իրացվելիության մակարդակը և իրականացնել դրանց ազդեցության արդյունքում տեղի ունեցող փոփոխություններին համապատասխան օպտիմալ մակարդակի ճշտում: Բացի նշվածից, արդյունավետ են նաև գործողությունների հետևյալ երկու տարբերակները.

1. Արտադրատնտեսական գործընթացների ճիշտ կառավարման և պարբերաբար վերահսկողության սահմանման միջոցով հնարավորություն ստեղծել բարձրացնելու շահութաբերության մակարդակը, որի արդյունքում կավելանան նաև կազմակերպության ակտիվները:

2. Կազմակերպության պարտավորությունների միակողմանի նվազմանն ուղղված գործողությունների իրականացում, մասնավորապես, հարկային վճարումների օպտիմալացում, պարտքային պարտավորությունների վերակառուցում, կրեդիտորական պարտքերի շրջանառելիության վերահսկողություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Բայադյան Ա.** «Ձեռնարկության ֆինանսական դրության գնահատումը»: – Երևան, Ասողիկ, 2002.
2. **Балдин К. В.** Банкротство предприятия: анализ, учет и прогнозирование. – М.: «Дашков и К», 2010.
3. **Белый Ю. А., Безрукова Т. Л.** Оценка ликвидности и платежеспособности мебельной компании. // Современные наукоемкие технологии. 2013
4. **Варламов А. В.** Организация эффективности управления ликвидностью и платежеспособностью предприятия. // Информационная и образовательная коммуникация. 2013.
5. **Волнин В. А., Королева А. А.** Анализ и оценка риска несбалансированной ликвидности предприятия // Финансовый вестник: финансы, налоги, страхование, бухгалтерский учет. 2011.
6. **Гапаева С. У.** Оценка ликвидности и платежеспособности предприятия. // Молодой ученый. 2013.
7. **Myers, Stewart C. and Rajan, Raghuram G.,** The Paradox of Liquidity (June 1995). NBER Working Paper No. w5143. Available at SSRN: <http://ssrn.com/abstract=225208>

Տճանադրվել է՝ 18.03.2024

Рецензирована/Գրախոսվել է՝ 05.04.2024

Принята/Ընդունվել է՝ 08.04.2024